

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ



ՀԱՄԱՅՆՔԻ ԱՆՁՆԱԳԻՐ

ՀԱՄԱՅՆՔ	Վարդաձոր
ՄԱՐԶ	Գեղարքունիք



1.ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Վարդաձոր, գյուղ ՀՄՍՀ Մարտունու շրջանում, Սևանա լճից 3կմ հարավ-արևմուտք, շրջկենտրոնից 9կմ հյուսիս-արևմուտք: Կաթնանասնապահական սովետական տնտեսությունն զբաղվում է նաև հացահատիկի, կերային կուլտուրաների, կարտոֆիլի, ծխախոտի մշակությամբ: Ունի միջնակարգ դպրոց, ակումբ, գրադարան, կապի բաժանմունք, կինո, ավտոմատ հեռախոսակայան, բուժկայան: Պահպանվել են մ.թ.ա. 722-705-ի ուրարտական արձանագրություններ: Բնակիչների նախնիները եկել են Ալաշկերտից և Մուշից, 1828-1829 թվականներին:

Վարդաձորի մասին ահա այսպիսի տեղեկություններ կարելի է ստանալ հայկական սովետական հանրագիտարանից: Էլ ավելի ժլատ է ժամանակակից վիքիպեդիա ազատ հանրագիտարանը: Անտեղ նշված է, որ գյուղը նախկինում անվանվել է Ադամխան և ընդգրկվել է Երևանի նահանգի Նոր Բայազետի գավառում:

Մակայն այստեղ կա մի շատ կարևոր տեղեկություն՝ գյուղի ներկայիս բնակիչների նախնիները եկել են 1828թ.-ին, այսինքն 190 տարի առաջ:

Թե ովքեր են ապրել ներկայիս Վարդաձորի տարածքում մինչև 1828թ.-ը և ինչ է եղել նրանց հետ քիչ բան է հայտնի, մի բան ակնհայտ է, որ այս տարածքը եղել է շատ զարգացած: Դրա մասին են վկայում բրոնզեդարյա ժամանակաշրջանին վերագրվող կիկլոսայան ամրոցների հետքերը, ուրարտական ժամանակաշրջանի սեպագիր արձանագրությունը, 13-17 դարերի մատուռները, 16-17-րդ դարերի խաչքարերը և այլն: Մակայն այդ ժամանակներից մնացել են միայն քարե լուռ վկաները, իսկ ժամանակակից վարդաձորցու պատմությունը սկսվում է հենց 1828թ.-ից:

Պատմություն:

1826 – 28թթ.-ին ռուս-պարսկական պատերազմն ավարտվեց ռուսական բանակի հաղթանակով: Թուրքմենչայի պայմանագրի համաձայն Արևելյան Հայաստանի մի սովար մասը միացավ Ռուսաստանին: Հայ ժողովրդի համար ծանր էր դրությունը Արևմտյան Հայաստանում: Թուրքական բռնապետության լծի տակ կքված հայերը նույնպես իրենց փրկության հույսը կապեցին Ռուսաստանի հետ: Թերևս փրկության հնարավորությունը ստեղծվեց 1828 – 29թթ. ռուս-թուրքական պատերազմի ավարտից հետո:

Պատերազմը սկսվեց 1828թ. ապրիլի 14-ին: Ռուսական բանակն ամենուրեք հանդիպում էր հայերի աջակցությանը: Ստեղծվում էին հայկական կամավորական ջոկատներ: 1828 – 1829 թվերին գրավեցին Կարսը, Արդահանը, Ախալքալակը, Ախալցխան, Էրզրումը, Դերջանը, Բայբուրթը և այլն: Ամենուրեք ցնծությամբ էին դիմավորում ռուսական բանակին, նրանց համարելով ազատարարներ: Արևմտյան տերությունները՝ Գերմանիան, Անգլիան, Ֆրանսիան, վախենալով ռուսական բանակի առաջխաղացումից, ստիպեցին դադարեցնել պատերազմը: Հաշտության պայմանագիր կնքվեց 1829թ. սեպտեմբերի 2-ին, Ադրիանապոլիս քաղաքում: Ըստ պայմանագրի ռուսական զորքերը պետք է Թուրքիային թողնեին Արևմտյան Հայաստանի գրավված տարածքները: Այդ տարածքներում ապրող հայությունը զգաց, որ իրեն սպառնում է բնաջնջման վտանգ: Բնակչության մի մասը թողեց իր բնօրրանը մինչև գաղթի թույլտվությունը:

Գաղթի ճամփան բռնած հայությանը մեծ աջակցություն է ցույց տալիս Կարապետ

Արքեպիսկոպոսը: Նրա ղեկավարությամբ ստեղծվում են աշխարհագրային ջոկատներ, որոնք ապահովում են գաղթողների անվտանգությունը:

Հարկ ենք համարում նշել, որ մեծ էր ֆելդմարշալ Պասկևիչի ծառայությունը: Նա կարողացավ համոզել Նիկոլայ 1-ին կայսրին, որ վերջինս գաղթողներին դրամական օգնություն ցույց տա:

“Այն գերդաստանների թիվը, որոնց սպառնում է անխուսափելի վտանգ,--գրում է նա Նիկոլայ 1-ին,--գրեթե հասնում է 10 հազարի: Ո՛վ ողորմած թագավոր, Ձեր կարեկցական ուշադրությունը դարձրեք այս դժբախտ գոհերի վրա և մի թողեք, որ օսմանյան ինքնիշխանությունը վրեժխնդիր լինի նույն այն համակրանքի համար, որ նոքա ցույց տվին Ռուսաստանին”:

Կայսրը գաղթականներին օգնելու համար տրամադրեց 250 հազար ռուբլի արծաթ /մեկ մլն.ռուբլի թղթադրամ:/

Գաղթականներին օգնելու համար Պասկևիչը օգտագործեց նաև իր ձեռքի տակ եղած 90 հազար ռուբլին /ոսկով/: Հետո կայսրից խնդրեց ևս 380 հազար ռուբլի:

Արևելյան Հայաստանի Ռուսաստանին միացած տարածքները հայ գաղթականներով վերաբնակեցնելը ձեռնատու էր Ռուսաստանին: Նիկոլայ 1-ինը Պասկևիչին գրել է. “Հավատացած եմ, որ Ձեզ հանձնած երկրում այդքան նշանավոր թվով ավելացած ժողովուրդը պաշտպան կկանգնի Ձեր այն բարի գործերին, որոնց նպատակն է հաստատուն դարձնել նրանց բնակությունը հոգուտ մեր կայսրության”:

Ֆելդմարշալ Պասկևիչի նախնական հաշվարկները գաղթող հայերի թվի վերաբերյալ սխալ էր: 10 հազար ընտանիքի փոխարեն գաղթեցին 14044 ընտանիք, շուրջ 100 հազար շնչով:

Գաղթականները խնդրանքով դիմում են ֆելդմարշալ Պասկևիչին, որպեսզի իրենց՝ գաղթականներին տեղավորեն Ալաշկերտի բնակլիմայական պայմաններին մոտ բնակավայրում: Պասկևիչը այս հարցում ևս ներդրում է իր լույման: Նախապես ուսումնասիրած է լինում Հայաստանի տարածքը, իմանում է բնակչության խտությունը որ շրջաններում է նուր: Ըստ այդմ էլ գաղթականների հոսքը ուղղում է դեպի այդ շրջանները:

Իրոք, Ալաշկերտն ու Սևանա լճի ավազանը իրենց բնակլիմայական պայմաններով ու աշխարհագրական դիրքով համարյա նույնն են: Ալաշկերտի դաշտը գտնվում է Շարիան և Ծաղկանց լեռնաշղթաների միջև, Սևանա լիճը երիզված է Գեղամա, Վարդենիսի և Արեգունի լեռնաշղթաներով, ծովի մակերևույթից մոտավորապես 1700-1900 մ բարձրության վրա: Համընկնում են նաև ձմեռային և ամառային միջին ջերմաստիճանները: Մի խոսքով ընտրված շրջաններում գաղթականները կարող էին ազատ կերպով զբաղվել հողագործությամբ և անասնապահությամբ, այսինքն՝ չփոխել հիմնական զբաղմունքը:

Ահա այսպես մեր նախնիները 28 ընտանք 169 շնչով Ալաշկերտից և Մուշից տեղափոխվեցին Ադամխան, ներկայիս Վարդաձոր: Գաղթականների թիվը Ադամխանում կազմում է 169 շունչ, որից 92-ը աշխատող ձեռք /15-ից 60տ./, 71-ը մինչև 14 տարեկան և միայն 6 շունչ եղել են 60 տարեկանից բարձր: Գաղթականների թվում կային բանիմաց և շնորհալի մարդիկ, որոնք կարճ ժամանակում գյուղը շենացնում են, երդիկներից ծուխ է բարձրանում, տները լցվում են մանկան ճիչով:

Անցել է 190 տարի, այժմ գյուղի բնակչությունը 3000-ից ավել է: Տարբեր տարիներին 2000-3000 բնակիչ լքել է Վարդաձորը և բնակություն հաստատել Հայաստանի և Ռուսաստանի տարբեր բնակավայրերում: Հիմնական պատճառն այն է եղել, որ համայնքի սակավաթիվ հողերը չեն կարողացել լիովին բավարարել բնակիչների

կարիքները: Այժմ էլ գյուղի տղամաղկանց հիմնական զբաղմունքը արտագնա աշխատանքն է: Սակայն ուր էլ, որ գնացել է վարդաձորցին իր շուրջը միայն բարիք է ստեղծել և ամենակարևորը, որ չի կտրվել հայրենի հողից: Այդ մասին են վկայում շքեղ առանձնատները, գեղեցիկ փողոցները, երկու տասնյակից ավել եկեղեցիներն ու մատուռները, որոնց գմբեթները երևում են գյուղի ցանկացած հատվածից: Գյուղի զարգացմանը անմասն չի մնում նաև պետությունը, վերջին տարիներին վերանորոգվել են դպրոցն ու մշակույթի տունը, կառուցվել է բոլորովին նոր առողջության կենտրոն, կառուցվել է նոր մանկապարտեզ, ասֆալտապատվել է գյուղի կենտրոնական փողոցը, կառուցվել է փողոցային լուսավորության նոր ցանց, ամեն տարի վերանորոգվում են խմելու ջրի և ոռոգման ցանցերը:

2. ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդաձոր գյուղը գտնվում է Սևանա լճի հարավ-արևմտյան հատվածում, սահմանակից է Երանոս և Ձորագյուղ համայնքներին:

Բնակավայրը, ծովի մակերևույթից գտնվում է 1950.0 – 2070.0 մ բարձրությունների վրա: Կոորդինատներ՝ 40°11'30" հս. և 45°11'15" ավ. է:

Համայնքի վարչական սահմաններում ընդգրկված է «Սևան» ազգային պարկի 202.77 հա հատվածը, հատվածում ընդգրկված Ազգային պարկի տնտեսական գոտին անտառապատ է, ռեկրեացիոն գոտում ռելիեֆը հարթ է, կլիմայական և բնական պայմանները բարենպաստ են: Տարածքում հանդիպում են երկկենցաղների՝ 3, սողունների՝ 16, թռչունների՝ 84, կաթնասունների 28 տեսակներ: Գիշատիչ կենդանիներից տարածված են գայլը, աղվեսը, գորշուկը, կզաքիսը, աքիսը, սմբակավորներից՝ բեզուարյան այծը, մուֆլոնը, կրծողներից՝ ճագարամուկը, գետնասկյուռը և այլն, թռչուններից՝ անգղը, արծիվը, կռունկը, կաքավը, լորը, արտույտը, սարյակը, կկուն, ճնճղուկը, սողուններից՝ հայկական լեռնատափաստանային վահանագլուխ իժը, գյուրգան: Օդի միջին տարեկան ջերմաստիճանը 4.6 – ից 5.4 °C, բացարձակ նվազագույն ջերմաստիճանը՝ -33 , -32 °C, բացարձակ առավելագույն ջերմաստիճանը՝ 34 °C: Օդի հարաբերական խոնավության միջին տարեկանը 70-ից 68 % է, տեղումների քանակը տարեկան՝ 489-ից 492 մմ, ձնածածկույթի առավելագույն տասնօրյակային բարձրությունը՝ 37-ից 75 սմ, տարվա մեջ ձնածածկույթով օրերի քանակը՝ 96-ից 103 օր, քամու միջին տարեկան արագությունը՝ 1.8-ից 2.6 մ/վ, հողի սառչելու առավելագույն խորությունը հասնում է 108.0 սմ:

3. ՀԱՄԱՅՆՔԻ ԿԼԻՄԱՅԱԿԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Մթնոլորտային տեղումների միջին տարեկան քանակը (մմ)	489-ից - 492 մմ
Օդի միջին ջերմաստիճանը հունվարին(0C)	-5

Օդի միջին ջերմաստիճանը հուլիսին (0C)	+16
--------------------------------------	-----

4.ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Նախկին (ՀԽՍՀ) վարչական շրջանի անվանումը	Մարտունի	
2. Համայնքի հեռավորությունը`		
2.1) մայրաքաղաքից (կմ)	120	
2.2) մարզկենտրոնից (կմ)	25	
2.3) պետական սահմանիցուղիղ գծով (կմ)	60	
2.4) նախկին շրջկենտրոնից (կմ)	12	
2.5) միջպետական նշանակության ավտոճանապարհից (կմ)	1	
2.6) երկաթուղային կայարանից (առկայության դեպքում) (կմ)	60	
3. Համայնքի բարձրությունը ծովի մակերևույթից (մ)	2015	
4. Համայնքի վարչական տարածքը (քառ. կմ/հա)	33.3	33333
5. Սահմանակից համայնքների անվանումները	Չորագյուղ, Երանոս	
6. Համայնքապետարանի էլեկտրոնային փոստի հասցեն	Vardadzor.gegharquniq @mta.gov.am	
7. Համացանցային պաշտոնական կայքի հասցեն	Vardadzor.am	
8. Համայնքի ղեկավարի հեռախոսահամարը	091550059	
9. Համայնքապետարանի հեռախոսահամարը	-	
10. Համայնքի հեռախոսային կոդը	-	
11. Համանքում փոստային բաժանմունքի առկայությունը(այո, ոչ)	Այո	
12. Համայնքապետարանի փոստային դասիչը	1417	
13. Հաստատված գլխավոր հատակագծի առկայությունը (այո, ոչ)	Այո	
14. Քաղաքացիների սպասարկման գրասենյակի առկայությունը (այո, ոչ)	ոչ	

5. ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ, ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿԱԶՄԸ

	2018թ.
1. Մշտական բնակչության թվաքանակը	2759
2. Գրանցված ծնունդների քանակը	42
2. Մահացության դեպքերի քանակը	23

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՆՁՆԱԳԻՐ

3. Ամուսնությունների քանակը	44
4. Ամուսնալուծությունների քանակը	0
5. Տնային տնտեսությունների թիվը	80
6. Ընտանեկան նպաստ ստացող տնային տնտեսությունների քանակը	123
7. Կենսաթոշակառուների քանակը	265
8. Հաշմանդամություն ունեցող անձանց քանակը	68

6. ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ, ԿՐԹԱԿԱՆ, ՄԱՐԶԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

	2018թ.
1. Գրադարանների քանակը	2
2. Արվեստի դպրոցների քանակը	0
3. Երաժշտական դպրոցների քանակը	0
4. Նախադպրոցական հիմնարկների քանակը	1
5. Հանրակրթական դպրոցների քանակը	1
6. Նախնական մասնագիտական (արհեստագործական) ուսումնական հաստատությունների քանակը	0
7. Միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների քանակը	0
8. Բարձրագույն ուսումնական հաստատությունների քանակը	0
9. Մարզադպրոցների քանակը	0

7. ԲՆԱԿԵԼԻ ՖՈՆԴ

	2018թ.
Համայնքի բնակարանային ֆոնդի ընդհանուր մակերեսը (մ2)	50624
Բազմաբնակարան շենքերի ընդհանուր թիվը	0
Բնակելի տների (առանձնատների) ընդհանուր թիվը	452

8. ՀՈՂԱՅԻՆ ՖՈՆԴ ԵՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

	2018թ.
1. Հողեր, ընդամենը (հա)	3321.42
2. Գյուղատնտեսական նշանակության հողեր (հա)	2793.94
3. Բնակավայրերի ընդհանուր տարածքը (հա)	235.07
4. Խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակը	1804
6. Մանր եղջերավոր անասունների (ոչխար և այծ) գլխաքանակը	155

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՆՁՆԱԳԻՐ

7. Խոզերի գլուխաքանակը	348
8. Գյուղատնտեսական տեխնիկա	20
8.1 տրակտորներ (քանակը)	11
8.2 կոմբայններ (քանակը)	3
9. Գյուղացիական տնտեսությունների թիվը	806

9. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ

1. Էլեկտրական ենթակայանների քանակը	8
2. Համայնքում գազիֆիկացման առկայությունը (այո, ոչ)	Այո
3. Համայնքում աղբավայրի առկայությունը (այո, ոչ)	Այո
4. Գերեզմանատան առկայությունը համայնքում (այո, ոչ)	Այո
5. Համայնքային ենթակայության ճանապարհների ընդհանուր երկարությունը (կմ)	15
6. Կոմունալ և ճանապարհաշինական տեխնիկայի առկայությունը	0
6.1 Ինքնաթափ բեռնատար մեքենաների քանակը	7
6.2 Էքսկավատորների քանակը	4
6.3 Թրթուռավոր տրակտորների քանակը	3
6.4 Գրեյդերների քանակը	0
6.5 քանակը	0
6.6 Աղբատար մեքենաների քանակը	0
6.7 Բազմաֆունկցիոնալ կոմունալ մեքենաների քանակը	0
6.8 Վակուումային փոշեկուլմեքենաների քանակը	0
6.9 Ավտոաշտարակների քանակը	2
7. Համայնքի տարածքով անցնող միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ընդհանուր երկարությունը (կմ)	1
8. Համայնքի տարածքում գործող առևտրային բանկերի մասնաճյուղերի առկայությունը (այո, ոչ) և դրանց քանակը	Ոչ
9. Ներհամայնքային երթուղիների առկայությունը (այո, ոչ)	Ոչ

10. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

Համայնքի վարչական բյուջեի եկամուտներ (հազ. դրամ)

	Ընդունված բյուջե	Փաստացի
1. Ընդամենը եկամուտներ	68887.0	68414.3
2. Հարկային եկամուտներ, ընդամենը Այդ թվում՝	10787.0	11268.5

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՆՁՆԱԳԻՐ

2.1 հողի հարկ	5781.3	5608.6
2.2 Գույքահարկ	5005.7	5659.9
3. Պաշտոնական տրանսֆերտներ, ընդամենը	55610.0	55610.0
3.1 դոտացիա	55610.0	55610.0
3.2 սուբվենցիա	0	0
4. Սուտքեր հողի օտարումից	0	0

Համայնքի վարչական բյուջեի ծախսեր(հազ. դրամ)

	Ընդունված բյուջե	Փաստացի
1. Ընդամենը ծախսեր	68887.0	65174.6

Համայնքի ֆոնդային բյուջեի եկամուտները (հազ. դրամ)

	Ընդունված բյուջե	Փաստացի
2. Ընդամենը ֆոնդային բյուջեի եկամուտներ	14904.7	14446.3

Ֆոնդային բյուջեի ծախսեր (հազ. դրամ)

	Ընդունված բյուջե	Փաստացի
1. Ընդամենը ծախսեր	14904.7	14446.3

11.ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ

2. 1. Համայնքապետարանի աշխատողների թվաքանակը, մարդ	12
3. որից՝	
4. համայնքային ծառայողներ	6
5.	
6. 2. Ապարատի պահպանման ծախսերը, ընդամենը (հազ. դրամ)	31244.0
7. 3. Ավագանու անդամների թվաքանակը	6

12. ՀԱՄԱՅՆՔԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Հիմնախնդիրը	Ակնկալվող լուծումը
Համայնքի խմելու ջրի հավաքակայանի վերանորոգում	2019թ. կվերանորոգվի ՀՀ Կառավարության օժանդակությամբ
Համայնքի երկու հեղեղատարների կիսախողովակների տեղադրում	Փնտրվում են միջոցներ և ներդրողներ խնդիրը լուծելու համար:
Համայնքի խմելու ջրագծի ներքին ցանցի 2 կմ հատվածի կապիտալ վերանորոգում	Փնտրվում են միջոցներ և ներդրողներ խնդիրը լուծելու համար:

Համայնքապետարանի նոր վարչական շենքի կառուցում:	Փնտրվում են միջոցներ և ներդրողներ խնդիրը լուծելու համար:
--	--